Գործ թիվ ԵԴ2/36978/02/23

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու և ապացույցներ պահանջելու մասին

27 նոյեմբերի 2023թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բաղիրյանս, քննության ըստ հայցի <<Աջափնյակ քոնսթրաքշն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ <<Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան>> փակ բաժնետիրական ընկերության՝ <<ԵՐՄՄԳ-ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ-2023/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Աջափնյակ քոնսթրաքշն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ <<Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան>> փակ բաժնետիրական ընկերության՝ խնդրելով անվավեր ճանաչել <<ԵՐՄՄԳ-ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ-2023/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի 2023 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 3 արձանագրությունը:

Հայցադիմումը 21.11.2023 թվականին մակագրվել է դատավոր Ա. Բաղիրյանին, դատավորին է հանձնվել 22.11.2023 թվականին:

Սույն հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ կետերի համաձայն՝

1. դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Scanned with CamScanner

2. Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Դատարանը գտնում է, որ պատասխանողից անհրաժեշտ է պահանջել ԵՐՄՄԳ-ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ-2023/1>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.6-րդ և 234.9-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. <<Աջափնյակ քոնսթրաքշն>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ <<Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան>> փակ բաժնետիրական ընկերության՝ <<ԵՐՄՄԳ-ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ-2023/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնային առաջարկներ գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման նիստի արձանագրությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող <<Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան>> փակ բաժնետիրական ընկերությունից պահանջել <<ԵՐՄՄԳ-ԳՀԱՇՁԲ-ՆՈՐՈԳՈՒՄ-2023/1>> ծածկագրով գնման գործընթացի հետ կապված՝ պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3. Թիվ ԵԴ2/36978/02/23 քաղաքացիական գործը դատական նիստում քննելու միջնորդություն չներկայացվելու դեպքում եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի 2024 թվականի հունվարի 18-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

Սույն որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, ենթակա է կատարման պատասխանողի կողմից այն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԲԱԴԻՐՅԱՆ**

Scanned with CamScanner